# ԻՇԽԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲԱԺԱՆՈՒՄԸ ԵՎ ՀԱՅ ԻՐԱՎԱՔԱՂԱՔԱԿԱՆ ՄԻՏՔԸ
(XVIII դ. երկրորդ կես)

ՄԱԼԻԿ ԹԵԼՈՒՆՑ

*«Իշխանությունների բաժանման» սկզբունքի սաղմերը ձևավորվել են հնագույն ժամանակներում, երբ ինքնակալական կամ բռնակալական պետական կառուցվածքների հակիրավականությունը, սոցիալական վնասը դնալով ավելի ու ավելի վտանգավոր ու անհանդուրժելի էին դառնում: Սկզբունքի էությունը հիմնականում հանդում է նրան, որ չի կարելի մի անձի կամ օրգանի ձեռքում կենտրոնացնել ամբողջ իշխանությունը՝ օրենսդիր, դատական և դործադիր, քանզի այն խախտում է հավասարակշռությունը, տեղիք տալիս ինքնակամ, ոչինչ հաշվի չառնող որոշումների, հանգեցնում չարաշահումների՝ հաճախ սոցիալական անկանխատեսելի վնասներ պատճառելով:*

*Արդեն անտիկ աշխարհի մտածողներից Արիստոտելը (384-322 մ.թ.ա.) բավարար որոշակիությամբ առաջադրում էր իշխանությունների տարանջատման սկզբունքը: Արիստոտելը պետական իշխանությունը կամ պետական կառուցվածքը բաժանում էր երեք մասի՝ օրենսդրական կամ օրենսդրախորհրդակցական, դատական և դործադիր (պաշտոններ կամ պաշտոնյաներ)[1]: Ըստ Արիստոտելի, պետական այդ երեք ձևերի ճիշտ զուդակցումից էլ կախված է պետական լավագույն կարգը[2]: Տալով օրենսդիր օրգանի իր ըմբռնումը՝ Արիստոտելը գտնում էր, որ օրենքների ընդունումը կարելի է վերապահել բոլոր քաղաքացիներին, քանզի լավագույն դեմոկրատական կարգն այն է, երբ բոլոր քաղաքացիներն են լուծում բոլոր հարցերը[3]:*

*Ավելորդ չէ նկատել, որ դեռ Արիստոտելից ավելի առաջ, Հին Հունաստանում (Աթենք, Սպարտա) իշխանությունների բաժանման կամ տարանջատման սկզբունքը որոշ չափով գործնական կիրառում էր գտել հանձինս ժողովրդական ժողովի՝ օրենսդիր օրգանի, 400-ի (հետագայում՝ 500-ի) խորհրդի, որը նախապատրաստում էր օրենքների նախագծեր և ներկայացնում ժողովրդական ժողովի քննարկմանը՝ ընդունմանը, դործադիր իշխանությունն իրականացնող արքոնտների, ստրատեդների, դատական իշխանությունն իրականացնող Արեոպագի, Հելիեայի և այլն[4]:*

*Իշխանությունների բաժանման կամ տարանջատման սկզբունքը, կամ*

---

*1* Аристотель. Сочинения. Т. 4, М., 1984, с. 514—525.
*2 Նույն տեղում:*
*3 Նույն տեղում, էջ 515:*
*4* Плутарх. Избранные жизнеописания. Т. 1, М., 1987, с. 96—97, 173—195; З. М. Чернилевский. Всеобщая история государства и права. М., 1983, с. 40—56.

ավելի ճիշտ թագավորական իշխանությանը զուգահեռ կոլեգիալ խորհրդակցական կամ ներկայացուցչական օրգանի անհրաժեշտության գաղափարին հանդիպում ենք Գրիգոր Տաթևացու (1346-1410 թթ.) մոտ: Վերջինս «հայ ժողովրդի դժբախտություններից մեկն էլ համարում է ֆեոդալ իշխանների ինքնագլուխ գործունեությունն ու անմիաբանությունը»: «Եւ մերս առաջնորդք և իշխանք հոգևոր կամ մարմնաւորք՝ որք ինքնիշխանութեամբ կատարեն զգործն առանց խորհրդակցի, վասն որոյ բարձեալք իշխանութիւն և ավերեալ երկիրն և տարագրեալ են ժողովուրդք մեր ի վերայ երկրի և ցրուեալ յամենայն ազգս»: Տաթևացին այն համոզմանն է, որ հայ ազգը վերոհիշյալ աղետները կկարողանար կանխել, եթե երկրի պետական ու քաղաքական բոլոր հարցերը լուծվեին համազգային խորհրդի կողմից. «Եւ առաւեալ քան զամենայն պիտանաւորութիւն՝ ունին առ միմեանս զժողովիլն ի խորհուրդ. և ապա համաձայն նոցին խորհրդով՝ վարել զշինութիւն աշխարհի»: Այդ խորհրդակցական օրգանի նշանակությունը Տաթևացին այնքան է չափազանցնում, որ փորձում է հավատացնել, թե այնտեղ իշխաններն էլ լսում են ժողովրդին և շարժվում են նրա ներկայացուցիչների խորհրդով: Երկրի կառավարման գործում խորհրդակցական օրգանի կարևորության վերաբերյալ Տաթևացու այս դրույթներն ամենևին էլ չեն ժխտում միապետության անհրաժեշտությունը: Գրանք վկայում են միայն, որ Տաթևացին բացարձակ միապետությանը հակադրում է սահմանադրական միապետությունը, որը նա համարում է կառավարման ամենառացիոնալ ձևը[5]:

Իշխանությունների տարանջատման սկզբունքը հետագայում ավելի հստակեցվում ու որոշակիացվում է XVII–XVIII դդ. մտածողների մոտ: Մասնավորապես այդ սկզբունքը ժամանակաշրջանի առումով բավարար մանրամասնությամբ վերլուծվում է Շառլ Լուի Մոնտեսքյոյի (1689–1755 թթ.) «Օրենքների ոգու մասին» աշխատության մեջ[6]: Այդ երեք՝ օրենսդիր, գործադիր և դատական իշխանությունների միավորումը մեկ օրգանում կամ անձի ձեռքում, ըստ Մոնտեսքյոյի, նշանակում է ամեն ինչի կործանում. «Թուրքերի մոտ, որտեղ այդ երեք իշխանությունները միացած են մեկ մարդու ձեռքում՝ ի դեմս սուլթանի, տիրում է սարսափելի բռնակալությունը»[7]:

Հայտնի է, որ հենց XVIII դ. երկրորդ կեսին աննախադեպ զարթոնք է ապրում նաև հայ ազգային-ազատագրական և դրա անքակտելի մասը կազմող իրավաքաղաքական միտքը, որի կարկառուն ներկայացուցիչներն էին Հովսեփ Էմինը (1726–1809 թթ.), Մովսես Բաղրամյանը (ծննդ. և մահ. թվերը հայտնի չեն), Շահամիր Շահամիրյանը (1723–1797 թթ.): Անգլիական կրթություն ստացած և ժամանակաշրջանի եվրոպական առաջադեմ գաղափարներին քաջատեղյակ Հովսեփ Էմինը, քննադատելով պարսկաթուրքական և ընդհանրապես ինքնակալական կարգերը, իր ակնհայտ համակրանքն է հայտնում անգլիական պետական կարգերի նկատմամբ, կար-

---

5 Հ. Գ ա բ ր ի ե լ յ ա ն. Հայ փիլիսոփայական մտքի պատմություն. հ. 2, Երևան, 1958, էջ 213–214: Ն. Թ ո վ մ ա ս յ ա ն. Գրիգոր Տաթևացու սոցիալ-տնտեսագիտական հայացքները. Երևան, 1966, էջ 70–71:

6 Ш. М о н т е с к ь е. Избранные произведения. М., 1955, с. 290 – 291.

7 Նույն տեղում:

գեր, որտեղ թագավորական իշխանությունը սահմանափակված է պառլամենտով. «Ես չարունակում եմ պաշտպանել իմ ճիշտ (դրական – Մ. Թ.) կարծիքը այս հռչակավոր հանրապետական ազգի (անգլիական – Մ. Թ.) մասին, որի գերընտիր օրենքները ոչ թե մեկ ճրագի են նմանվում, որ միայն տիրոջն են լուսավորում, այլ նման են արևին, որն իր լույսն է սփռում ամբողջ տիեզերքի վրա»[8]: Էմինի անմիջական ազդեցությամբ նրա դինակից ու դաղափարակից Մովսես Բաղրամյանն իր 1772թ. լույս տեսած «Նոր տետրակ, որ կոչի յորդորակ» պատմաքաղաքական երկում հայկական պետականության կործանման հիմնական պատճառներից մեկը համարում էր օրենքով չսահմանափակված ինքնակամ իշխանությունը: Բաղրամյանն առաջարկում էր միապետական իշխանությունը սահմանափակել խորհրդարան-պառլամենտով (կամ խորհրդակցական օրգանով) սահմանադրությամբ և անեղծանելի օրենքներով: Դա հասարակությունը բազմատեսակ վնասներից զերծ պահելու երաշխիք է, քանզի առանձին մարդը սխալական է, ըստ որում հասարակության վրա ավելի ծանր է նստում իշխանի, թագավորի (որպես առանձին անհատների) սխալը, քանի որ նրանց իրավունքներն ավելի մեծ են. «Ուրեմն, թեև ամենքն էլ մեղանչում և սխալվում են ոչ առանց վնասի և հատուցման, սակայն ոչ այնպես, ինչպես տերերը, իշխաններն ու ազգի նահապետները, բանն այն է, որ եթե հասարակ ժողովրդից որևէ մեկը սխալվում կամ մեղանչում է, ապա միայն իրեն է վնաս բերում, իսկ իշխանի սխալվելը ոչ միայն վնասներ, այլև երբեմն մեծամեծ պատուհասներ ու աշխարհավերածություններ է բերում ամբողջ ազգին...»[9]: Հետևաբար, պետք է իշխանությունը, պետությունը՝ ի դեմս թագավորի, ինքը ևս տեղավորվի օրենքի շրջանակներում, լինի կոլեգիալ. «Ուստի իշխանությունը ինչ-որ միմիայն մեկի դատողությանն ու կառավարմանը չպետք է ենթակա լինի, այլ ամենալավագույնը կլիներ, եթե իշխանությունն անխախտելի սահմանադրությամբ և անեղծանելի օրենքներով կախում ունենար ընտիր-ընտիր ու մեծամեծ խորհրդականներից և տեսակ-տեսակ խորհրդատուներից: Այդ դեպքում միայն իշխանը կարող էր ժողովրդի հանդեպ ամեն մի խղճմտանքից ազատ լինել և երջանկորեն վայելեր իր երկիրը, որի շնորհիվ և երկիրը կլիներ խաղաղ ու բարեկարգ վիճակում: Բանն այն է, որ թերևս ընտրյալներից մեկնումեկը սխալվի կամ ինչ-որ հանցավոր գործով տապալվի (նման պարագայում), մյուսները կարող են նրան փութանակի ուղղել ու ոտքի կանգնեցնել»[10]: Բաղրամյանի դատողությունները շատ պարզ են ու տրամաբանական՝ միասյուն առաստաղի մեկ սյունը խաբխլվելու դեպքում ամբողջ առաստաղն է փլվում, իսկ բազմասյուն առաստաղի դեպքում՝ մյուս սյունները պահպանում են առաստաղը[11]:

Շահամիր Շահամիրյանը, սակայն, չի բավարարվում նման դատողություններով: Նա իշխանությունների տարանջատման և իրավական պետութ-

---

8 Հովսեփ Էմինի կեանքն ու արկածները. Պեյրութ, 1958, էջ 8:

9 Նոր տետրակ, որ կոչի յորդորակ. Մադրաս, 1772, էջ 139, Յորդորակ..., Երևան, 1991, էջ 159:

10 Նոր տետրակ, որ կոչի յորդորակ. Երևան, էջ 132, հմմտ. Յորդորակ..., Մադրաս, էջ 161:

11 Նույն տեղում, էջ 161–162:

*յան ելակետային սկզբունքների հիման վրա կազմում է իր սահմանադրությունը՝ օրենքների ժողովածուն (521 հոդվ.) և այդ սահմանադրության նորմերով կարգավորվող ապագա հայկական պետության մոդելը[12]: «Որոգայթ փառացը» հստակորեն տարանջատում է օրենսդիր, գործադիր և դատական իշխանությունը: Ամենից առաջ պետք է ընդգծել, որ պետական իշխանության աղբյուրը, ըստ «Որոգայթ փառացի», ժողովուրդն է, և գա հռչակագրային կամ կարգախոսային բնույթ չի կրում: Իշխանության մարմինների ձևավորումը սկսվում է նրանից, որ նախ՝ 14-րդ հոդվածի համաձայն, ապագա Հայաստանի 12000 տուն ունեցող յուրաքանչյուր գավառի մեջ մտնող ամեն մի գյուղից ընտրվում է մեկական պատգամավոր՝ փոխանորդ, որոնք ընտրվում են ամբողջ ժողովրդի կողմից: Այնուհետև գավառից ընտրված բոլոր փոխանորդներից վիճակահանությամբ ընտրվում են երկուսը, որոնցից մեկն ընդգրկվում է օրենսդիր, մյուսը՝ գործադիր իշխանության կազմում: Բոլոր փոխանորդների լիազորությունը հաստատվում է համայնքների՝ գյուղերի ավագանու կողմից, երեք տարի ժամանակով[13]: Օրենսդիր իշխանություն իրականացնելու համար լիազորված անձը «Որոգայթում» կոչվում է տանուտեր տա՛նն հայոց, իսկ գործադիր իշխանություն իրականացնողը՝ պաշտօնատար ի տանեն հայոց: Այդ երկու փոխանորդներին այլ աշխատանք չի թույլատրվում, նրանք կատարում են միայն իրենց պատգամավորական լիազորությունները, որի համար ստանում են յուրաքանչյուրը տարեկան 3000 դահեկան արծաթ. «...փոխանորդքս ստանայցեն իւրաքանչ տանէ տարեկանաւ կէս դահեկան երծաթի, յամահաւասարութիւնն ըստ կարեաց տանց, զի այս վեց հազար դահեկանս հատուցումն լինիցի ծախ կարեաց երկու փոխանորդաց իւրեանց, զի նոքայ մնասցեն անհոգս 'ի ծախից, պահելով ժամանակս փոխանորդութեան իւրեանց ազատ առ 'ի խորհուրդ և գործ վասն բարութեան ժողովրդեան իւրեանց...»[14]:*

*Պետական իշխանության բարձրագույն օրգանը ժողովրդի կողմից ընտրված փոխանորդ տանուտերերից կազմված Հայոց տունն է՝ պառլամենտը: Օրենքը կարող է ընդունվել միայն Հայոց տան կողմից: Օրենքը պետք է ընդունվի ամբողջ ժողովրդի՝ ազգի կողմից, համապատասխանի նրա կամքին: Այդպիսի օրենքը ազգի միակ առաջնորդը, իշխանն ու թագավորն է (հոդվ. 16):*

*Բոլոր փոխանորդներից ընտրվում, կազմվում է 13 հոգուց բաղկացած գործադիր իշխանություն՝ կառավարություն, որը իր լիազորությունը ստանում է Հայոց տնից և պատասխանատու է Հայոց տան առջև (հոդվ. 18). «Ամենայն պաշտօն եթէ նախարարութեան, եթէ դատաւորութեան, եթէ խորհրդակցութեան. իշխանութեան, ամենայն, կարգ զինուորութեան, դպրութեան, գծագրութեան և ամենայն կառավարութեան 'ի տանէն Հայոց և 'ի տանուտերաց ելցէ, և 'ի վերայ նոյն պաշտօնատարութեան տալոյ իշխանութիւն 'ի տանէն և տանուտերացէ Հայոց թուղթ պաշտօնի ըստ Օրի-*

---

*12 Գիրք անուանեալ Որոգայթ փառաց, Վասն կալանաորելոյ ամենայն գործ անկարգութեան. Մագրաս, 1773, Թիֆլիս, 1913:*

*13 Նույն տեղում, էջ 147–149:*

*14 Նույն տեղում, էջ 148:*

նաց»[15]:

Ուշադրավ է, որ ոչ միայն կառավարությունը՝ 13 հոգուց կազմված բարձրագույն գործադիր օրգանը, այլև բոլոր նախարարները և զինված ուժերի հրամանատարները՝ սպարապետները, ինչպես նաև դատավորները՝ ընտրովի են, նրանք անմիջապես ժողովրդի կողմից ըստ գավառների, ընտրված անձինք են: Ընտրովի են և հիշատակված անձանցից կազմված ոչ միայն 25 հոգուց բաղկացած Գերագույն դատարանը, այլ նաև տեղերի՝ շրջանների, քաղաքների համար նախատեսված 60 դատավորները: Ընդհանրապես «Որոդայթ փառացը» նշանակովի պաշտոն չունի: Ապագա հայկական պետության՝ անմիջապես ժողովրդի կողմից ընտրված 568 պատգամավորներից 284-ը ընդգրկվում են գործադիր իշխանության մեջ, 204-ը՝ օրենսդիր: Ժողովրդական է նաև «Որոգայթի» այն սկզբունքը, որ ցանկացած պաշտոնյա, ցանկացած պատգամավոր կարող է ետ կանչվել, եթե նա մեղք գործի՝ հանցանք կատարի կամ չարդարացնի ժողովրդի վստահությունը: Այս կանոնը վերաբերում է թե՛ օրենսդիր, թե՛ գործադիր իշխանության անդամներին: Դեռ ավելին, «Որոգայթը» սահմանում է (հոդվ. ՂԷ, 95), որ եթե «Ի վերայ ամենայն պաշտօնատարի հաստատելով վկայիւք կաշառառութիւն նորայ իսկոյն անկցի նա 'ի պաշտօնե իւրմէ և մ'ի երբէք մտցի պաշտօն 'ի ժամանակս կենաց իւրոց»[16]:

Շահամիրյանը թեև իր սահմանադրության մեջ առաջադրել է եկեղեցին պետությունից անջատ լինելու, միմյանց գործերին չմիջամտելու սկզբունքը, այնուամենայնիվ հոգևորականությանը չի զրկել երկրի օրենսդիր բարձրագույն մարմնում իր ներկայացուցիչն ունենալու իրավունքից: «Որոդայթի» ԺԲ (12) հոդվածը չեղում թույլ տալով՝ նախատեսում է, որ հոգևոր փոխանորդն ընտրվի հոգևորականության կողմից: Հոգևորականությունն ընտրում է մեկ արքեպիսկոպոս-փոխանորդ 3 տարով պառլամենտում՝ Հայոց տանը իր շահերը ներկայացնելու համար:

«Որոդայթի» ուշադրավ նորմերից է նաև նրա Ծ (50) հոդվածը, ըստ որի օրենսդիր մարմնի անդամը՝ տանուտերը, չի կարող միաժամանակ պաշտոն գրավել գործադիր իշխանության մեջ, ըստ որում, եթե պատահի այնպես, որ տանուտերը ընտրվի գործադիր իշխանության մեջ, ապա նա պետք է ետ վերադարձնի տանուտերի մանդատը[17]: Այսինքն՝ այստեղ ևս արտահայտվում է Շահամիրյանի հստակ դիրքորոշումը՝ հավատարիմ մնալ «իշխանությունների բաժանման» սկզբունքին, թույլ չտալ օրենսդիր և գործադիր ֆունկցիաների համատեղում մեկ անձի կամ մեկ մարմնի կողմից:

Վերը նշված ընդհանուր դեմոկրատական կարգից Շահամիրյանի չեղումը նրանում է, որ եթե ըստ ընդհանուր կանոնի կառավարությունը և նրա նախագահը՝ նախարարը, ընտրովի են, 12 անդամներն ընտրվում են ցմահ, իսկ նախարարը՝ 3 տարով, ապա հայ թագավորական արքայատոհմերից որևէ մեկի՝ ներկայացուցչի առկայության դեպքում, եթե նշանակվի նախարար և ծադի գործադիր իշխանության գլուխ ընտրելու հարցը, ապա

15 Նույն տեղում, էջ 152:
16 Նույն տեղում, էջ 242:
17 Նույն տեղում, էջ 173:

վերջինս՝ նախարարը, ընտրվում է ցմահ՝ ժառանգական կարգով, իսկ 12 անգամները՝ 3 տարով[18]: «Որոգայթի» Ի, ԻԱ (20-21), ԾԲ-ԾԷ (52-57) հոդվածները կարգավորում են ժառանգական նախարարի ինստիտուտը: Շահամիրյանն այսպես է պատճառաբանում. «Այլ եթէ գուցե զի այժմ և կամ յապա ժամանակ ըստ ժամանակս ելցէ ոմն, և կամ ոմանք ի սերնդոց նախնոյ մերոյ Հայկայ, և կամ հաւատարմաց մերոց Վաղարշակայ և Բագրատայ ցանկանայցեն Նահապետութեան Հայաստանեայց անձամբ, և կամ որդէ որդի ժառանգութեամբ և երդմամբ խոստանայցէ պաշտել զԱստուած ըստ կերպին աւանդութեան Հայաստանեայց եկեղեցւոյ, հնազանդել օրինաց, որ ելցէ ի տանէն և ի տանուտէրացէ հայոց և յանձն առնու ի վերայ իւր հատուցանել վնասն գործոց ձեռաց իւրոց ըստ օրինօքն Հայաստանեայց կալով մնալ զամենայն աւուրս կենաց իւրոց մի և նոյն զօրութեամբ որպէս գլուխ 51. յօրէնս նախարարութեան յայնժամ պարտ է մեզ սիրով ընդունիլ պատուիլ նմայ փառօք և պատուօք»[19]: «Որոգայթի» ընդհանուր համակարգից չեղում պետք է համարել այն, որ եթե նա միայն տղամարդկանց է ընտրվելու իրավունք վերապահում, ապա ժառանգական նախարարի դեպքում այդ պաշտոնի համար թույլատրելի է համարում նաև իգական սեռի անձանց[20], որը, բնականաբար, բխում է ժառանգական իշխանության բնույթից: Գրականության մեջ ճիշտ է նկատվել, որ զիջումը և ընդհանրապես ժառանգական նախարարի վերաբերյալ ընդհանուր կարգից թույլ տրված շեղումն արվել է քաղաքական նկատառումներով[21]: Հայտնի են քաղաքական այն ակնկալիքները, որ Շահամիրյանը և հատկապես Հովսեփ Էմինը կապում էին վրաց Հերակլ II Բաղրատունու գլխավորությամբ հայ-վրացական միասնական պետություն ստեղծելու հետ: Հենց այդ նկատառումով էլ Շահամիրյանը թույլ է տալիս ժառանգական նախարարի հնարավորությունը: Ըստ որում, այս բացառությունն իր նախադեպն ունի նաև անգլիական սահմանադրական իրավունքում, որի 1653թ. դեկտեմբերի 16-ի ակտը սահմանում էր, որ Լորդ պրոտեկտորի պաշտոնը համարվում է ոչ ժառանգական, նույն ակտի մեկ այլ հոդված սահմանում էր, որ Օլիվեր Կրոմվելը ճանաչվում է որպես ցմահ Լորդ պրոտեկտոր[22]:

Հիշատակված երկու դեպքում էլ մենք դործ ունենք քաղաքական կոնկրետ ակնկալիքների և իրադրության հետ: Հետևաբար «Որոդայթ»-ում արված բացառությունը ոչնչով չի նսեմացնում նրանում առաջադրված ժողովրդական պետական համակարդը: Ժառանգական նախարարի մասին հիշատակված նորմեր կան «Որոգայթի»՝ Մատենադարանում պահվող տարբեր ժամանակների ձեռագիր օրինակներում ևս[23]: Սա նույնպես կրկին

---

18 Նույն տեղում, էջ 178:

19 Նույն տեղում:

20 Նույն տեղում, էջ 179:

21 Հ. Ութմազյան, Վ. Հակոբյան. Հայ ազատագրական գաղափարների երկու կենտրոն և երկու ծրագիր XVIII դ. երկրորդ կեսին.— ԵՊՀ ուսանողների դիտ. աշխատությունների ժողովածու. հ. 3, Երևան, 1941, էջ 103–105:

22 Конституции и законодательные акты буржуазных государств XVII—XIX вв.— Сборник документов под. ред. проф. П. Н. Галанзы, М., 1957, с. 93—94.

23 Մ. Մաշտոցի անվան Մատենադարան (այսուհետև՝ Մատենադարան), ձեռ. № 7886, հոդվ. 52–58, թ. 42–46, ձեռ. 3101, հոդվ. 52–57, թ. 47–51, ձեռ. 3102, հոդվ. 52–57, թ. 49–53:

վկայում է այն մասին, որ Շահամիրյանը հենց սկզբից էլ նախատեսել է ժառանգական նախարարի հնարավորությունը՝ դարձյալ վերը նշված քաղաքական նկատառումներով: Սակայն ժառանգական նախարարը հատուկ արտոնություններ և իրավունքներ չունի, օգտվում է նույն իրավունքներից և կրում նույն պարտականությունները, ինչ ընտրովի նախարարը՝[1]: Թե՛ ժառանգական և թե՛ ընտրովի նախարարը պարտավոր է ենթարկվել օրենքին, ինչպես բոլորը, օժտված է իշխանությամբ. «...գործելոյ զամենայն գործս բարիս, այլ ընդ դէմ օրինացն հայոց գործ ոչ մի»[25], իրավունք ունի Հայոց տան համաձայնությամբ բանակցություններ վարել, լուծել պատերազմի և խաղաղության հարցերը, ներում չնորհել, պետության ռազմական ուժերը ղեկավարել կամ ստանձնել Գերագույն հրամանատարի իրավունքը ևս: Նախարարը երդում է տալիս պահպանել օրենքները և հավատարիմ մնալ Հայոց տանը[26]:

Ինչպես ընտրովի, այնպես էլ ժառանգական նախարարը կարող է ետ կանչվել պաշտոնից՝ կատարած հանցանքի կամ հակաօրինական այլ գործողությունների համար: Նույնը վերաբերում է ցմահ կամ որոշակի ժամկետով ընտրված 12-ի խորհրդին՝[7]: Այստեղ, ինչպես արդեն ասացինք, Շահամիրյանի դեմոկրատական համակարգի ամենադեմոկրատական կողմերից մեկն էլ բոլոր պաշտոնատար անձանց փոփոխելիության, կատարած հանցանքի կամ այլ անօրինական գործողությունների համար ետ կանչելու սկզբունքն է, մի հանգամանք, որը հնարավորություն է տալիս ապահովել դեմոկրատական կառավարում: Այսպես, փոխանորդի ետ կանչելու, ժամկետից շուտ զբաղեցրած ընտրովի պաշտոնից հեռացնելու սկզբունքն իր արտացոլումն է գտել «Որոգայթի» և՛ տպագիր տեքստում, և՛ ձեռագիր օրինակներում: Օրինակ, տպագիր տեքստի ՄԼԶ (236) հոդվածը սահմանում է. «Ամենայն ոք ստացեալ պաշտօն, որում աստիճանի որ իցէ՝ ոչ ոք կարող լիցի հանել և կամ իջուցանել նմայ ի պաշտամանէ, բայց գործ մեղաց ձեռաց իւրօք (ընդգծումը մերն է – Մ. Թ.) և մահ կենաց և լրումն ժամանակի պաշտօնի իւրեանց»[28]: «Որոգայթի» № 7886 ձեռագիր օրինակում կարդում ենք. «Ամենայն ոք ստացեալ զպաշտօն որում աստիճանի որ իցէ ոչ ոք կարող լիցի հանել և կամ իջուցանիլ զնա ի պաշտօնէ, բայց ի գործոյ հանցանաց նորա (ընդգծումը մերն է – Մ. Թ.) և մահ կենաց և լրումն ժամանակի պաշտօնէ նոցին»[29]: Մեկ այլ ձեռագրում (3101) ասվում է. «Ամենայն ոք ըստացեալ պաշտօն որում աստիճանի որ իցէ ոչ-ոք կարող լիցի հանել կամ իջուցանել նմայ ի պաշտոնէ, բայց գործ մեղաց ձեռաց իւրոյ (ընդգծումը մերն է-Մ.Թ.) և մահ կենաց, և լրումն ժամանակի պաշտօնի իւրեանց»[30]:

Պատգամավորներին կամ պաշտոնյաներին ժամկետից շուտ ետ կանչելու իրավունքը, որն ամրապնդված է Շահամիրյանի սահմանագրության

24 Որոգայթ փառաց..., էջ 175–181:
25 Նույն տեղում, էջ 175:
26 Նույն տեղում, էջ 174–177:
27. Նույն տեղում, էջ 178–179:
28 Նույն տեղում, էջ 289:
29 Մատենադարան, ձեռ.. № 7886, հոդվ. 236, էջ 156:
30 Մատենադարան, ձեռ. № 3101, հոդվ. 236, էջ 180, 181:

մեջ, այսօր էլ մնում է որպես իսկական՝ ժողովրդավարական համակարգի ապահովման լավագույն երաշխիք: Նկատենք, որ այդ ինստիտուտը սահմանված է նաև ամերիկյան 1787թ. սահմանադրության մեջ[31]: «Որոգայթը» չի սահմանում, թե ո՞ւմ կողմից է ետ կանչվում փոխանորդը, բայց նրա ամբողջ համակարգից երևում է, որ նա ետ է կանչվում կամ հեռացվում է պաշտոնից այն մարմնի կողմից, որը նրան մանդատ է տվել, այն է՝ Հայոց տան, տանուտերերի՝ օրենսդիր մարմնի կողմից: Ընդ որում, դա բավականին որոշակի հաստատվում է ՄԼէ (237) հոդվածից, որը սահմանում է, որ «ամենայն իշուցեալ ոք ի աստիճանէ պաշտօնի ով որ իցէ, և կամ անկեցեալ ի պաշտօնէ ոչ ոք վերստին նորոգեալ կարէ բայց տունն Հայոց տանուտէրամբ»[32]: «Որոգայթի» ԺԸ (18) հոդվածը սահմանում է, որ բոլոր պաշտոնյաները իրենց լիազորություններն ստանում են Հայոց տնից[33]: Այս երկու հոդվածների համադրումից կարելի է հանգել այն եզրակացության, որ ետ կանչումը կամ պաշտոնից ժամկետից շուտ հեռացումը կատարվում է Հայոց տան նախաձեռնությամբ՝ համապատասխան հիմքերի առկայության դեպքում: Նույն կարգով է կատարվում նաև նախարարի և 12-ի խորհրդի (կառավարության) անդամների ետ կանչումը կամ պաշտոնից հեռացումը: Շահամիրյանը 12-ի խորհուրդն անվանում է «ծածուկ խորհրդարան», որի նախատիպը անգլիական «գաղտնի խորհուրդն է», որը կազմավորվել է թագավորին կից, դեռևս միջնադարում: «Գաղտնի խորհրդի» միջոցով, որի անդամները նշանակվում էին թագավորի կողմից, անգլիական թագավորն իրականացնում էր բարձրագույն կառավարումը: «Գաղտնի խորհրդից» XVIII դ. սկզբին կազմավորվել է անգլիական կաբինետը[34]: Այսպիսով, Շահամիրյանի 12-ի խորհուրդը կամ կառավարությունը նախատիպ ունենալով անգլիական «գաղտնի խորհուրդը» և հետագայում այդ հիմքի վրա կազմավորված մինիստրների կաբինետը, դրա հետ միաժամանակ տարբերվում է նրանով, որ եթե «գաղտնի խորհրդի» և կաբինետի անդամները նշանակվում կամ ընտրվում էին պրեմիեր մինիստրի կողմից, ապա Շահամիրյանի «ծածուկ խորհրդարանը» կամ «Մինիստրների կաբինետը» ընտրվում է, ըստ որում, սկզբնական փուլում անմիջապես ժողովրդի կողմից (խոսքը յուրաքանչյուր գյուղից մեկական և 12000 տուն ունեցող յուրաքանչյուր գավառից երկուական փոխանորդ ընտրելու մասին է), իսկ ընտրության հաջորդ փուլերում՝ վիճակահանության միջոցով: Սա ևս «Որոգայթի» անվիճելի առավելություններից մեկն է, նաև մի ավելորդ ապացույց այն բանի, որ հաշվի առնելով եվրոպական սահմանադրական փորձը՝ Շահամիրյանը այն չի «պատճենել», այլ ինքնուրույն զարգացրել է, ընդ որում, որպես կանոն, առավել դեմոկրատական, առավել առաջադիմական հիմքի վրա խստորեն ղեկավարվելով իրավունքի, օրենքի գերակայության՝ իրավական պետության և իշխանությունների տարանջատման սկզբունքներով:

---

31 Конституции ... , с. 180, 187.

32 Որոգայթ փառաց ..., էջ 289 (ընդգծումը մերն է – Մ. Թ.):

33 Նույն տեղում, էջ 152:

34 Мортон. История Англии. М., 1950, с. 67–68; З. М. Черниловский. Նշվ. աշխ., էջ 234–236:

Ընդ որում, օրենքի, իրավունքի գերակայության սկզբունքը, առանց որի «իշխանությունների տարանջատումը» չի կարող կենսունակ լինել, Շահամիրյանի մոտ կենտրոնական տեղ է գրավում: Ինքը՝ «Որոդայթ փառաց» անվանումն արդեն արտահայտում է հեղինակի նպատակը՝ ստեղծել այնպիսի օրենքներ, որոնք որոգայթ թակարդ կհանդիսանան բոլոր այն մարդկանց համար, ովքեր կփորձեն չարաշահել իրենց դիրքը, գործել կամայականորեն՝ ի վնաս պետության և ժողովրդի: Մարդը, իր փոփոխական բնույթից բխող բոլոր բացասական երևույթները բացառելու համար, պետք է ղեկավարվի միայն օրենքով. « ... պարտ է ընտրել մեզ վարք և կարգ և օրէնք վասն վարուց կենաց մերոց և լծորդել փոփոխական բնութիւնս մեր ընդ անշարժ օրինօք, զի եթէ ժամանակ ընդ ժամանակս կենաց մերոց ըստ խառնուածոց բնութեան մերոյ միտս մեր ձկտիցէ առ 'ի գործս անասնոց և անբանից: Շղթայք կապանաց օրինաց մերոց պնտելով՝ սաստեցուսցէ բնութեանս մերոյ և օրինօք դատապարտեսցի, զի կացցուք և մնասցուք ամենեքեանս բարեպէս ընդ կարգ և սահմանս մերոյ օրինաց, որ ընտրեցեալ 'ի լրումն ժամանակէ բնութեանց մերմէ, զի սովաւ արդարասցէ դատաւորն և սովաւ ընդունեսցի մեղաւորն պատիժս իւր վասն մեղաց գործոյ ձեռաց իւրոյ, և սովաւ յատնեսցի բարին և չարն, սովաւ ծանիցէ ամենայն բնութիւն մարդւոյ հարկս իւր և համախոհ հնազանդելով օրինաց իւրեանց՝ ընթանասցէ ուղղակի կառն իրաւանց և արդարութեանց, և կառավարիչն կալով մնասցէ առանց տեղի բամբասանց և այլն»[35]: Օրենքի գերակայության սկզբունքը Շահամիրյանն ընդդծում է բազմիցս[36]: Իր օրենքների «Հատուկ մասի» ԺԶ (16) հոդվածում որպես կոնկրետ իրավանորմ, Շահամիրյանն արդեն ուղղակի գրում է, որ օրենքն ընդունվում է Հայոց տան կողմից, այն պետք է հավանության արժանանա ամբողջ ազգի կողմից, որը և այն՝ օրենքը, ընդունում է որպես իր միակ տիրոջ (հովվի)[37]: Իհարկե, զուտ գիտական, ակադեմիական՝ առավել ևս ժամանակակից իրավագիտության իմաստով, գուցե ասենք, որ «Որոդայթում» խոսքը սոսկ «օրենքների պետության» կամ «օրինականության պետության» մասին է (ինչպես Շահամիրյանի «իշխանությունների բաժանումը» ժամանակակից առումով՝ մասնավորապես «հավասարակշռության» մեխանիզմի առումով կարող է թերի դիտվել), սակայն «Որոդայթը» արտահայտում է մտքեր, որոնց առնչությամբ կարող ենք «գոնե» ասել, որ այն իր ժամանակաշրջանի առումով, մեղմ ասած, բավական մոտենում է «իրավական պետության» սկզբունքին: Մասնավորապես, Շահամիրյանը չի բավարարվում սոսկ օրենքների ընդունմամբ կամ միմիայն դրանով ղեկավարվելու սկզբունքով, նա պահանջում է նաև, որ օրենքը լինի իրավական, այսինքն՝ ընդունված մարդու «բնական բնությանը» և «բանական հոգուն»՝ մարդկանց, հասարակության իրական պահանջներին համապատասխան, լինի արդարության չափ: Ահա թե ինչ է գրում Շահամիրյանը.՝ «Նա ևս հարկաւոր է իմ ասել, բարեկամք ընթերցողաց իմոց և հաստատեալ 'ի միտս ձեր, զի հաստատութիւն զամենայն, զոր ինչ բանի 'ի յերեսս երկրի, որում կարէ

35. Որոդայթ փառաց..., էջ 32–33:
36 Նույն տեղում, էջ 21–22, 64–65, 151:
37 Նույն տեղում, էջ 151:

*կալ յաւիտեան, որ նոյն ինքն լինիցի իբրև տեսարան 'ի ակն ամենայն տեսողաց, և զի ո՛չ մնաց և ո՛չ մնալ կարէ 'ի վերայ հաստատութեան զամենայն զոր ինչ ի յերեսս երկրի ընդ հովանեաւ բնութեան մարդոյ ո՛չ կարդ, ո՛չ կանոն, ո՛չ հրաման, ո՛չ հնազանդութիւն, ո՛չ սէր, ո՛չ թշնամութիւն, ո՛չ պատիւ, ո՛չ նախատինք, ո՛չ կեանք, և ո՛չ վախճան* եթէ չիցէ ընթացեալ 'ի ճանապարհաւ, և կերպիւ և համեմատութեամբ բանական բնութեան մարդոց ի զօրութենէ բանական հոգոյ ընտրողութենէ, եթէ ընթերցող մորայ գուցէ այնքան պատանի, որ 'ի միտս իւր կարի առնուլ թե զիարդ հրաման կայսեր և թագաւորաց, որ երբեմն ընդ դէմ բնութեան մերոյ իբրև փայլակ ելանէ և ոչ նայի համեմատութիւն ինչ բնութեան մերոյ, և կատաբ հրամանի 'ի վերայ նորայ, փոքր խոսիւք ցուցից նշաւակ ինչ վասն հաստատելոյ խոսքն իմ որ 'ի վեր այսինքն կայսրն հրամայէ զիս առնուլ թեւիս և թռչիլ 'ի հոգս, և կամ զգենալ փող և մուծանիլ զիս 'ի խորս ովկիանոս ծով, և բանալ աչք իմ ընդդեմ ճառագայթի արեգակն քննել զամենայն, զոր ինչ 'ի միջի նորայ, և ոչ ուտիլ քառասուն ամ, և ոչ եղուլ արտաքս 'ի յորովայնէ և այլ նմա մորայ ընդդեմ բնական բնութեան հրամանի, *երկայնամիտ լեր ընթերցող, եթէ 'ի վեր վոքրիկ վկայիւք յիշեցուցեալս վասն սիրոյ և կամ յերկիւղի և հնազանդութեան կայսեր կարես դա անձամբ անձի կատար հասուցանել, այլ որպէս, ես դիտեմ զի ո՛չ դու և նոյն գունակ ո՛չ ամենայն մարդ, որ 'ի բնութենէ մարդոյ ոչ ոք կարէ առնել զայ, որ իցէ ընդդէմ բնական բնութեան մերոյ, ոչ թե 'ի պատճառէ յանդգնութեան և կամ ապստամբութեան հրամանի կայսեր, այլ միմիայն 'ի պատճառն ընդ դէմ բնութեան մերոյ լինիլն, որ զամենայն հրաման և պատվեր և օրենք և այլ,* զոր ինչ որ ընդ դէմ բնութեան մերոյ ոչ երբէք կարէ մնալ 'ի մէնջ մեր և ոչ կարէ հաստատիլ 'ի տեղի իւր եթէ ոչ մնայ միայնակ, *ընդ դէմ բնութեան հրամանս պատճառ լինիցի քակելոյ, աւերելոյ Շինութիւնս մեր և աղտեղեցուցանելոյ մաքրութիւնս մեր, լծորդելոյ ազատութիւնս մեր և այն ...»*[38]:

*Ավելացնենք նաև, որ «Որոգայթի» ժողովրդական, ելակետային հիմնական, վերը նշված սկզբունքները ձևավորվել են դեռևս 1770-ական թվականների սկզբին (կոնկրետ 1774-1776թթ.), ավելի շուտ, քան ԱՄՆ-ի և Ֆրանսիական սահմանադրությունների ընդունումը*[39]:

## РАЗДЕЛЕНИЕ ВЛАСТЕЙ И АРМЯНСКАЯ ПОЛИТИКО-ПРАВОВАЯ МЫСЛЬ
(Вторая половина XVIII в.)

*МАЛИК ТЕЛУНЦ*

Р е з ю м е

В статье рассматриваются вопросы, касающиеся принципа разделения

---

*38 Նույն տեղում, էջ 116-118 (ընդգծումները մերն են-Մ.Թ.):*

*39 Մ. Թ ե լ ո ւ ն ց. Հայ ազգային-ազատագրական շարժումը XVIII դ. երկրորդ կեսին և իրավաքաղաքական միտքը. Երևան, 1995, էջ 123-130, 141-149:*

властей в сочинениях известных армянских деятелей XVIII в. – Иосифа Эмина, Мовсеса Баграмяна и Шаамира Шаамиряна. В частности, делается вывод о том, что в составленном уже в начале 70-х годов XVIII в. проекте первой армянской конституции "Западня честолюбия" с определенной четкостью реализован принцип разделения властей или ограничения властных полномочий в сочетании с основополагающими принципами народовластия и правового государства.

## DIVISION OF THE POWER AND ARMENIAN JURIDIICAL-POLITICAL IDEA
(The second half of the 18th century)

*MALIK TELUNTS*

S u m m a r y

The opinions of the well-known Armenian illuminators Hovsep Emin, Movses Baghramian and Shahamir Shahamirian concerning the principles of the division of the power are discussed in the article. Particularly the following conclusion is drawn on the basis of lawpolitical researches that in the second half of the 18th century in the project of the first Armenian constitution "Vorogayt Parats" the principle of the division of the power or limitation of power is rather thoroughly discussed combined successfully with such modern principles as people's power and the state of law.